600.0226.26.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 հունիսի 2019 թվականի №226Ա

ք.Երևան

«ՍՈԼԱՐ ՊԱՌԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԴՌՄԱՍԱՐ 1» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՍՈԼԱՐ ՊԱՌԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի մայիսի 29-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՍՈԼԱՐ ՊԱՌԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Դդմասար 1» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դդմասար համայնքի վարչական տարածք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2040 թվականի դեկտեմբերի 27-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 27-ը:
2. Հաստատել «ՍՈԼԱՐ ՊԱՌԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվող «Դդմասար 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունիսի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
26 հունիսի 2019թ.